ARMENIAN MARKETING ASSOCIATION

The Ministry of economy of the Republic of Armenia

Հարգելի գործարարներ

Մարքեթինգի Հայկական Ասոցիացիան 2019 թ.-ի օգոստոսի 21-ին ՀՀ Էկոնոմիկայի նախարարության հետ կնքել է «ՀՀ արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության ռազմավարությամբ նախատեսված միջոցառումների կազմակերպման» մասին պայմանագիր, որը ուղղված է արտահանման զարգացմանը և գործարարների աջակցմանը իրենց արտադրանքը արտերկրում ներկայացնելու և արտահանման հնարավորություն ստեղծելու կամ ընդլայնելու համար:

Հաշվի առնելով սննդի վերամշակման ոլորտի ընկերությունների արտահանման ներուժն ու նշանակությունը գյուղատնեսության ոլորտի զարգացման համար, նախարարությունը նախանշել է 25-30 կազմակերպությունների մասնակցության աջակցում 2020 թ.-ի փետրվարի 10-14 ընկած ժամանակահատվածում Ռուսաստանի մայրաքաղաք Մոսկվայում կայանալիք խոշորագույն "PRODEXPO" միջազգային ցուցահանդեսին: Նախատեսվում է, որ ՀՀ ընկերություններն տվյալ ցուցահանդեսին ներկայանալու են միասնական տաղավարով, որտեղ կազմակերպությունները հնարավորություն ունեն ներկայացնել իրենց ապրանքներն ու ծառայությունները:

Սույն նամակով հրավիրում ենք բոլոր շահագրգիռ ընկերություններին, որոնք գործում են վերոնշյալ ոլորտներում և ցանկություն ունեն մասնակցելու "PRODEXPO" ցուցահանդեսին, լրացնել ու ներկայացնել մասնակցության հայտ:

Նախնական դիմումների հավաքագրման փուլի ավարտին, Մարքեթինգի Հայկական Ասոցիացիան կհրավիրի բոլոր հետաքրքրված ընկերություններին ավելի մանրամասն քննարկելու աջակցության ձևաչափը, ինչպես նաև այլ տեխնիկական հարցեր:

Հետաքրքրված ընկերություններին խնդրում ենք լրացնել սույն նակամին կից ներկայացվող կարճ հարցաշարը, և մինչև հոկտեմբերի 25-ը ուղարկել այն info@armenianmarketing.com էլ. հասցեով և զանգահարել 055 076607 հեռախոսահամարին՝ ստացումն հաստատելու նպատակով:

Ցանկացած այլ հարցերի դեպքում խնդրում ենք զանգահարել 010 540719 համարով:

Հարգանքով՝

Արամ Նավասարդյան, նախագահ
Մարքեթինգի Հայկական Ասոցիացիա

+374 10 54 07 19, 010 58 16 98
info@armenianmarketing.com
fb.com/armenianmarketing
armenianmarketing.com
Armenia, Yerevan, 0019
2 Baghramyan ave., 28